Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

362
Z-24

№466

11 MAR 201

Հայաստանի Ս.Ճապաստ. Յերեխ. Բար. Ընկ. Հրատ. № 2

# ՀԱՅԱՍՏԱՆԻ

## ԱՆԱՊԱՍՏԱՆ ՅԵՐԵԽԱՆ. ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

# ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

БИБЛИОТЕКА
ИН СТИТУТА
Академия Наук
СССР

1924 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻՑ
ՄԻՆՉԵՎ
1926 Թ. ՄԱՐՏԻ 1-Ը

ՅԵՐԵՎԱՆ
1926 թ.

362
Հ-24

Հայաստանի Անապաստ. Յերեխ. Բար. Ընկ. Հրատ. № 2

362
Z-24

# ՀԱՅԱՍՏԱՆԻ
## ԱՆԱՊԱՍՏԱՆ ՅԵՐԵԽԱՆ. ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
# ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

**1924 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻՑ**
**ՄԻՆՉԵՎ**
**1926 Թ. ՄԱՐՏԻ 1-Ը**

ՅԵՐԵՎԱՆ
1926 թ.

03 JUN 2013

43 301



S6760-66

Գրառ. № 466 (բ) Տիրաժ 700. Պատվ. № 3239.

Տպագրական Տրեստի 2-րդ տպարան, Երևան։

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԱՊԱՍՏԱՆ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1924 թ. նոյեմբեր ամսին տեղի ունեցավ առաջին սահմանադիր ժողովը Հայաստանի Անապատան Յերեխաների Բարեկամների Ընկերության։

**Որակարգի հարցերն հետեվյալներն էին՝**

1. Հայաստանի անապատան յերեխաների վիճակի և նոր կազմակերպվելիք ընկերության անելիքները։

2. Հայաստանի մանկատների դրության մասին։

3. Ընկերության կանոնադրության ընթերցումն ու հաստատումը։

4. Վարչության անդամների և վերստուգիչ հանձնաժողովի ընտրությունը։

Վարչության անդամներ ընտրվեցին հետեյալ ընկերները՝ 1. Համբարձումյան Մարիամ, 2. Տեր-Սարգսյան Ա., 3. Բժ. Կամսարական, 4. Պողոսյան Վասակ, 5. Աթաբեկյան Գրիգոր, 6. Բաբայան Հ., 7. Կուզնեցով, 8. բանվորուհի Նեկտար, 9. Բզնունի՝ 10 Վարդանյան Ֆլորա, 11 Բժ. Թարխանյան, 12. Սարիկյան, 13. Յեվանգյուլյան Գ. 14. Ինջիկյան Հ. 15. Կարեն Միքայելյան։

Փոխանդամներ՝

1. Թառայան Ս., 2. Տեր-Գրիգորյանն ,3. Զոլախյան Սաթո, 4. Մելքումյան Յեփրեմ։

Վերստուգիչ հանձնաժողովի անդամներ՝

1. Մակարյան Ա., 2. Մանվելյան Մ., 3. Զորյան Ստեփան։

Փոխանդամներ՝

1. Ընկ. Դանչո, 2. Բժ. Յեղիազարյան։

Վարչությունը իր առաջին նիստում ընտրեց նախագահություն հետեյալ ընկերներից՝ ընկ. ընկ. 1. Պողոսյան Վասակ (նախագահ), 2. Համբարձումյան Մարիամ (փոխնախագահ և գան-

ձապահ) 3. Համայակ Ինջիկյան (քարտուղար), Ընկերներ՝ Կուզնեցով, Տեր-Սարգսյան Ա., Աթաբեկյան Գրիգոր, Վարդանյան Ֆլորա, Բժ. Կամսարական (նախագահության անդամներ)։ Տարվա ընթացքում վարչության և նախագահության անդամների մեծամասնությունը բացակայել է քաղաքից, այս պատճառով տեղի յե ունեցել մի շարք փոփոխություններ։ Ընկ. Պողոսյան Վասակի հաճախակի յերկարատև բացակայության շնորհիվ ընտրվել է յերկրորդ փոխնախագահ ընկ. Ֆլորա Վարդանյանը, և ընկ. Համայակ Ինջիկյանի քաղաքից տեղափոխվելուն պատճառով՝ քարտուղար է ընտրվել բժ. Թարխանյանը։

Նախագահությունը իր առաջին նիստում մոտավորապես ընդգծեց ընկերության անելիքները, այն է՝ կազմակերպել ընկերությունը բջիջների միջոցով և բանալ մանկատուն 70 յերեխաների համար։

## ԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Ընկերությունս առաջին հերթին պիտի մտածեր ընկերության կազմակերպության մասին։ Այս նպատակով վարչությունը մի շրջաբերականով դիմեց Արհմիություններին, վորպեսզի ամեն մեկը իր գծով, իր կոլեկտիվներին կից կազմակերպի բջիջներ։ Այս աշխատանքը առաջ գնաց բավական դանդաղ կերպով, չորս ամսվա ընթացքում կազմակերպվել եյին 16 կոլեկտիվներին կից բջիջներ։ Տեսնելով այս դանդաղ ընթացքը, Վարչությունը կրկին այս հարցը քննության առավ և վորոշեց այս անգամ Արհմիությունների ու ընկերության անունից շրջաբերականով դիմել առանձին կոլեկտիվներին մանրամասն բացատրելով ընկերության նպատակները, առաջարկել նրանց կազմակերպել բջիջներ։ Միևնույն ժամանակ մի քանի հոդվածներ զետեղեց մամուլի մեջ, ընկերության նպատակները ժողովրդականացնելու համար։ Այս ձեռք առած միջոցներից հետո, աշխատանքը մի փոքր աշխուժացավ. այժմս բջիջների թիվը հասնում է 44-ի։ Պետք է ասել, վոր մինչև որս անդամավճարները մուծվում են վերին աստիճանի անկանոն. կոլեկտիվների կողմից այսպիսի վերաբերմունք մասամբ բացատրվում է նրանով, վոր միաժամանակ կոլեկտիվներին կից կազմակերպված են մի քանի ընկերությունների բջիջներ։

Ըստ կանոնադրության ընկերությունս պիտի հիմներ նաև ճյուղեր Հայաստանի զանազան վայրերում, բայց չունենալով վարչության ազատ անդամներ, վորոնք կարողանային շրջել գավառները, վարչությունս թողել է այս հարցը առժամանակ բաց, և վորոշել է առաջին հերթին ուժեղացնել կազմակերպությունը կենտրոնում։ Աչքի առաջ ունենալով, վոր Լենինականում Գործադիր Կոմիտեին կից կազմակերպված է անապատան յերեխաներին ոգնող հանձնաժողով, վարչությունս այդ հանձնաժողովին ուղարկել է ընկերության կանոնադրությունը յեվ առաջարկել է այնտեղ հիմնել ընկերության ճյուղ։

Վարչության անդամներից Մոսկվայի բնակիչ ընկ. Կարեն Միքայելյանը, առաջարկեց վարչությանը տալ իրեն թույլտվություն Մոսկվայում հիմնելու Անապատան Յերեխաների Բարեկամների Ընկերության ճյուղ, վորը հիմնվեց։ Այժմս Մոսկվայի այդ ճյուղը բավականաչափ ոգնություն է հասցրել ընկերությանս։ Վերջին ժամանակներս Մոսկվայի Անապատան Յերեխաների Բարեկամների Ընկերության բաժինը վորոշել է 25 սանների բոլոր կարիքները հոգալ, ուղարկելով համապատասխան դրամ ընկերությանս։

## 1-ԻՆ ՄԱՆԿԱՏՈՒՆ (ԾԱՂԿԱՁՈՐՈՒՄ)

Վարչությանս առաջ դրված եր 70 յերեխայի համար մանկատուն կազմակերպելու խնդիրը, շենք չունենալու պատճառով այս հարցը առաջ բերեց մեծ խոչնդոտներ։ Վորոշված եր քաղաքում շենք չգտնելու դեպքում, փնտրել այդպիսին շրջակայքում, բայց վոչ Քանաքեռում և վոչ ել Եջմիածնում վոչ մի հարմար շենք չգտվեց։ Վորոշվեց կազմակերպել մանկատունը Ծաղկաձորում։ Բայց մինչ վարչությունս զբաղված եր շենք փնտրելու խնդրով, վրա հասավ սաստիկ ձմեռը, անհնարին յեղավ յերեխաներին տեղափոխել Ծաղկաձոր։ Ձմրան սառնամանիքը ստիպեց գտնե ժամանակավոր ապաստարան գտնել փողոցում գտնվող յերեխաների համար։ Վարչությունս դիմեց Յերեվանի Գործադիր Կոմիտեին, խնդրեց ժամանակավորապես տեղավորել իրենց մանկատան մեջ (վորտեղ իրենք արդեն ունեյին 75 յերեխա) փողոցից հավաքված յերեխաներին։ Չնայած Գործադիր Կոմիտեի շենքը շատ փոքր եր և ուներ խոշոր անհարմարություններ, բայց և այնպես ընկերությունը այստեղ տեղավորեց 145 յերեխա։ Ընկերությունս այժմ մտածում կր վոչ թե 70 յերեխայի, այլ փողոցում գտնվող բոլոր յերեխաների մասին, և այս նպատակով ստիպված յեղավ, բացի այդ 145-ից, հավաքել մնացածներին, վորոնք թվով 80 եյին։ Ընկերությանս հաջողվեց սրանց համար ել գտնել ժամանակավոր ապաստարան 2 սենյակից, վորտեղ տրվում եր տաք ճաշ և թեյ. այսպիսի աննախանձելի վիճակի

մեջ եյին գտնվում մոտ յերեք ամիս այս յերեխաները։

Վերջապես դիմելով Ամերիկոմին ընկերությանս հաջողվեց Ամերիկոմի դատարկ շենքը վերցնել ու հնարավոր յեղավ բոլոր յերեխաներին հավաքել մի տեղ, և դնել քիչ թե շատ տանելի պայմանների մեջ։ 70 յերեխաների փոխարեն, ձմեռվա սարսափները ստիպեցին հավաքել 225 յերեխաներ։ Այժմս ընկերությունը պիտի մտածեր իր բեռը թեթևացնելու մասին. վորովհետև վոչ մի նյութական հնարավորություն չուներ հոգալ 225 յերեխաների կարիքները։

Բնական ե, վոր հավաքած յերեխաներին, ընկերությունս չեր կարող կրկին գցել փողոց, պետք եր գտնել մի յելք. ընկերությունս դիմեց Կարմիր Խաչին և Հայաստանի Ոգնության Կոմիտեյին վերցնել յերեխաների մի մասը։ ՀՈԿ-ը միջոցներ չունենալու պատճառով մերժեց։ Իսկ Կարմիր Խաչը համաձայնվեց վերցնել 100 յերեխաներ. մնաց 125 յերեխա ընկերությանս խնամքի տակ։ Զորս մեծահասակ տղաների համար, վորոնք գիտեյին արհեստներ, գնվեց անհրաժեշտ գործիքներ և նրանք ուղարկվեցին գյուղերը իբրև արհեստավորներ։ Մեծահասակներից 10 հոգի յեվս ուղարկվեցին Սարդարաբատի տրակտորային աշխատանքներին։ Մոտ 20 յերեխաների ծնողները գտնվեցին և ուղարկվեցին ծնողների մոտ. նրանց տրվեց՝ հագուստ, անկողին և մի փոքրիկ գումար։ Իսկ մնացած 75 աղջիկները ուղարկվեցին Ծաղկաձոր, ուր Յերևանի Գործադիր Կոմիտեն տրամադրել եր մի ընդարձակ շենք, և այստեղ հիմնվեց Ծաղկաձորի 1-ին մանկատունը, պայմանները անհամեմատ լավացան, այժմ պետք եր մտածել դաստիարակչական գործի մասին։ (Իսկ 16 յերեխաներ փախել են զանազան ժամանակներ)։

## 2-ՐԴ ՄԱՆԿԱՏՈՒՆ (ՆՈՐՔՈՒՄ)

Մինչ ընկերությունս զբաղված եր վերոհիշյալ 225 յերեխաների ապաստանելու խնդրով, Յերևանի փողոցները կրկին լեցվեցին յերեխաներով։ Վարչությունս զգալով, վոր իր միջոցներով չի կարողանալու հավաքել այս նոր յերեխաներին, գումարեց ընդլայնած վարչության նիստ, ուր հրավիրված եյին ներկայացուցիչներ զանազան հասարակական հիմնարկներից, այստեղ անապաստանության խնդիրը դրվեց սկզբունքային տեսակետից, առաջարկվեցին մի շարք միջոցներ, վորոնցով կարելի կը լիներ թեթևացնել անապաստանությունը Հայաստանում. իսկ ինչ վերաբերվում ե կոնկրետ, ներկայումս փողոցում թափառող



անապաստան յերեխաներին Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կողմից յեղավ առաջարկություն ընկերությանը հավաքել դրանցից մոտավորապես 200 հոգի և կազմակերպել մի նոր մանկատուն, վորի ծախքերը Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն վերցրեց իր վրա։ Վարչությունս անմիջապես դիմեց այս 2-րդ մանկատան կազմակերպչական գործին. Լուսժողկոմատի միջոցով հաջողվեց ստանալ Նորքում մի շենք, վորը թեպետ շատ հին եր և պահանջում եր վերանորոգում, վերանորոգումից հետո կազմակերպվեց 2-րդ մանկատուն Նորքում, վորտեղ հավաքվեց 134 յերեխա, շենքի փոքրության պատճառով հնարավոր չեղավ հավաքել ավելի յերեխաներ։ Փողոցում մնացել են միայն 20 յերեխա, վորոնք նույնպես մոտ որերս կը հավաքվեն։

## ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Մի շարք հանգամանքներ, շենքի պակասությունն ու անհարմարությունը, հմուտ մանկավարժների բացակայությունը, և ընկերությանս միջոցների սղությունը չեն թույլ տվել մինչև որս դաստիարակչական գործը դնել իր բարձրության վրա։ Անապաստան յերեխաների դաստիարակչական գործը ավելի ծանր ե, քան թե նորմալ պայմաններում ապրող յերեխաների. փողոցը նրանց տվել ե այնպիսի բացասական հատկություններ, վորոնց արմատախիլ անելու համար հարկավոր ե յերկար ժամանակ և նպաստավոր պայմաններ, անձնվեր ու հմուտ մանկավարժներ։ Մոտավոր գաղափար կազմելու համար այս յերեխաների մասին, ավելորդ չե այստեղ հիշել, վոր յերեխաները փողոցից հավաքելուց հետո, յենթարկվել են բժշկական քննության և պարզվել ե, վոր 75 աղջիկներից 43 աղջիկ ապրելով փողոցի պայմաններում, կորցրել են իրենց կուսությունը, վոմանք ունեցել են զանազան կանացի վարակիչ հիվանդություններ. բացի այդ, թե տղաների և թե աղջիկների մեջ տարածված եր, քոս, քաչալ և շատերը հիվանդ եյին տրախոմայով։ Ընկերությանս կողմից ձեռք առնվեցին համապատասխան միջոցներ նրանց բժշկելու համար։ Քոսերը և քաչալները բժշկվեցին, բայց կան դեռ ևս տրախոմայով հիվանդներ։

Ծաղկաձորի մանկատան աղջիկները յերկար ժամանակ չեյին հաշտվում ապրել գյուղում, և շարունակ փախուստ եյին տալիս, անցնելով 60 վերստ վոտքով գալիս եյին քաղաք, ամեն անգամ վարչությունը միջոցներ եր ձեռք առնում և կրկին նրանց ուղարկում եր հետ. անհրաժեշտ եր մանկատունը հետաքրքիր դարձնել և գտնել միջոցներ կապելու նրանց գյուղի հետ։ Ընկերությունս դիմեց Ծաղկաձորի գյուղխորհուրդին, վորը հատ-

կացրեց մի հողաբաժին, ուր մանկատան սաները սկսեցին զարգացնել բանջարանոց, վորից նրանք ստացան մի փոքրիկ ձմեռվա պաշար. այս հանդամանքը նրանց վոգեվորեց և նրանք կամաց-կամաց կապվեցին մանկատան հետ և սկսեցին աշխատանքը։ Ձմեռվա ընթացքում նրանց համար հիմնվեց կար ու ձևի և ձեռագործի արհեստանոց, վորտեղ պարապում է ինքը կառավարչուհին։

Ծաղկաձորի մանկատան աղջիկները կառավարչուհու հսկողության տակ կատարում են իրենց մանկատան բոլոր աշխատանքները, մաքրում են սենյակները, յեփում են կերակուր, անում են իրենց մանկատան լվացքը։ Շնորհիվ այն հանդամանքի, վոր վարչությունս կարողացավ Ծաղկաձորի շենքին կից իր միջոցներով և կառավարչուհու ջանքերով կառուցել բաղնիս. յերեխաները բավական մաքուր են. Ծաղկաձորի մանկատան մեծ բացը այն է, վոր մի կողմից միջոցների բացակայության պատճառով, իսկ մյուս կողմից Լուս-բաժնի վրա հույս դնելով, վորը խոստացել եր իրենց դպրոցը ընդունել մանկատան սաներին, մինչև այժմս այս աղջիկները մնացել են առանց դպրոցի։

Մոտ ապագայում անհրաժեշտ է հրավիրել ուսուցիչներ նրանց հետ պարապելու, և միևնույն ժամանակ պիտի աշխատել զարգացնել նրանց մեջ կաթնատնտեսությունը և մեղվաբուծությունը. այս նոր հանդամանքները ավելի յեվս նրանց կը կապեն մանկատան և միևնույն ժամանակ գյուղի հետ։

Ամառվա ընթացքում այս մանկատունը ուներ պիոներական ուժեղ կազմակերպություն, վոր մեծ դեր կատարեց նրանց դաստիարակչական գործի մեջ, բայց միջոցներ չունենալու պատճառով ձմեռվա ընթացքում հնարավոր չեղավ ունենալ առանձին պիոներական հրահանգիչ։

Ինչ վերաբերում է յերկրորդ մանկատան դաստիարակչական գործին, վորը միմիայն յերեք ամիս է ինչ կազմակերպված է, պետք է ասել, վոր այստեղ յերեխաները դեռ չեն յենթարկված դիսցիպլինայի, նրանց մեջ դեռյեվս վառ կերպով ապրում են փողոցից բերած հատկությունները՝ զողություն, ստախոսություն, հայհոյանք։ Այս յերեխաները դպրոցի կողմից ապահովված են, հաճախում են Նորքի դպրոցը, վերջերս սերտ կերպով կապվել են պիոներական կազմակերպության հետ և ունեն առանձին հրահանգիչ։ Արհեստանոցնի չափազանց կարիք է զգացվում, աշխատանքը առհասարակ ամենալավ միջոցն է մանավանդ փողոցի յերեխաներին դաստիարակելու։ Յերեխաները իրենք կարծես զգալով այդ, շարունակ դիմումներ են անում



և խնդրում իրենց համար կազմակերպել արհեստանոցներ, յեթե ընկերությանս հաջողվի կազմակերպել արհեստանոցներ, յերեխաների բացասական գծերը շուտով կը վերանան։

Վերջերս Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն հատկացրել է նրանց մի փոքրիկ այգի, վորտեղ շուտով նրանք կսկսեն իրենց աշխատանքները, և այս հանհամանքը կունենա իր դրական ազդեցությունը։ Դաստիարակչական գործը լավ հիմքերի վրա դնելու համար անհրաժեշտ են նյութական միջոցներ։ Պետք է ասել, վոր ընկերությանս միջոցները կրել են պատահական բնույթ, հնարավորություն չի յեղել վարչությանս թե դաստիարակչական գործը և թե իր ամբողջ գործունեությունը տանել ծրագրված ու սիստեմատիկ կերպով։

## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ընկերությանս միջոցները այս հաշվետու շրջանում յեղել են անդամավճարները, Մոսկվայի ճյուղի ուղարկած նպաստները, փարիզից ստացած նպաստներ, կազմակերպված շաբաթյակից ստացած արդյունքը, զանազան խմբակներից և անհատներից ստացած նվիրատվությունները, 1925 թ. գարնան տուփերով հանգանակությունը, ամառվա ընթացքում Ծաղկաձորում կազմակերպած յերեկույթի, վիճակախաղի (վորտեղ վաճառվել են գլխավորապես յերեխաների աշխատանքները) ստացած հասույթները։

Բացի մանկատներից Ընկերությունս ոգնություն է հասցրել նաև մի քանի վորբերի (11 հոգի), վորոնք ստանում են պարբերաբար նպաստ և ապրում են մանկատներից դուրս։

Բացի այդ, 15 հոգի վորբեր ուղարկված են հեռավոր տեղեր իրենց ծնողների մոտ, Ռուսաստանի զանազան քաղաքները, մեկը ուղարկված է արտասահման։

---

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

**Գործունեության սկզբից մինչև 1925 թ. հոկտեմբերի 1-ը**

*Ընկերությունն իր գործունեությունը սկսել է 1924 թ. նոյեմբերին առանց վարևե դրամագլխի։ Վարչության առաջին հոգսը յեղել է նյութական միջոցների հայթհայթման խնդիրը։ Դրա համար նա 1924 թ. նոյեմբերին ձեռնարկել է հատուկ կամպանիայի և կազմակերպել է շաբաթյակ, որը տվել է Ընկերությանը մաքուր վաստակ 1944 ռ. 60 կ. *) բացի այն ապառիկներից, որ մտցել են որոշ հիմնարկների և անհատների վրա։ Այնուհետև 1925 թ. ընթացքում Վարչությունը կազմակերպել է այլ հանգեռներ և հանգանակություններ, որոնցից ստացվել է զուտ արդյունք 1474 ռ. 42 կ., որանից հետո մայիսին կազմակերպած տուփերով հանգանակությունը տվել է 520 ռ. 34 կ., ոգոստոսին Ծաղկաձորում կազմակերպած յերեկույթը 487 ռ. 73 կ. ու այլ և այլ հանգանակությունները—466 ռ. 35 կ.։ Այսպիսով առաջին հաշվետու տարվա ընթացքում հանգեռների և հանգանակության միջոցով ստացված է ընդամենը 3419 ռ. 2 կ.։*

*Ընկերության հասույթների յերկրորդ աղբյուրը կազմել են միանվագ նվերները և նպաստները, որոնք ստացվել են թե զանազան հիմնարկներից և թե անհատներից։ Դրանց գումարը մինչև անցյալ տարվա սեպտեմբերի վերջը հասնում է 19001 ռ. 52 կ., որոնց մեջ աչքի յեն զարնում Անդրկենտգործկոմի նախագահ ընկ. Ցխակայայից ստացված 7500 ռ., Հայաստանի ժողկոմխորհից 3000 ռ., Ընկ. Մոսկվայի ճյուղից—1000 ռ., Պարսկաստանից Ռուսբանկի միջոցով—615 ռ. 08 կ., քաղ. Կարիկյայից ՀՈԿ-ի միջոցով—945 ռ., Թիֆլիսի Ամերկոմից ապրանքով՝ 820 ռ., ընկ. Շահվերդյանից—150 ռ. *), Հայաստանի Կարմիր Խաչից նրանց վորբերի պահպանության համար նպաստ—3300 ռ. և կամպանիայի առթիվ նվեր—1000 ռ. **) անգլուհիներից յերկու նվագով—96 ռ. 25 կ. և զանազաններից 575 ռ. 19 կ.։*

*Վարչությունս կազմակերպել է զանազան կոլեկտիվներին կից ընկերության բջիջներ, որոնց թիվը առ 1-ն հոկտեմբերի 1925 թ. յեղել է 28 և որոնցից հաշվետու տարվա ընթացքում գանձված է 2165 ռ. 52 կ. ըստ հետևյալ ցուցակի։*

| № № | Բջիջի անունը | Գումարը Ռ. | Գումարը Կ. | № № | Բջիջի անունը | Գումարը Ռ. | Գումարը Կ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հայգյուղկ. կոլ. բջիջից | 54 | 40 | 15 | Հայկենտգործ կոլ. բջիջից | 35 | 22 |
| 2 | Ներքգործժող. կոլ. » | 56 | 30 | 16 | Բանկոոպի կոլ. » | 105 | — |
| 3 | Մանկ. թանգ. կոլ. » | 195 | 65 | 17 | «Արարատ» տր. կոլ. » | 36 | 80 |
| 4 | Հիդրոշենի կոլ. » | 30 | — | 18 | Փոստհեռժողկոմի կոլ. » | 163 | 90 |
| 5 | Հայկոոպի կոլ. » | 92 | 05 | 19 | Գյուղբանկի կոլ. » | 14 | 60 |
| 6 | № 1 դպրոցի կոլ. » | 30 | — | 20 | Հայառի կոլ. » | 109 | 35 |
| 7 | Պետ. Հ. Համալսարանի » | 280 | — | 21 | Դեղատների միաց. կոլ. » | 13 | 85 |
| 8 | Արտ. Հանձնաժող. կոլ. » | 394 | 50 | 22 | Պետհրատի կոլ. » | 3 | 60 |
| 9 | Հայբամբակկոմի կոլ. » | 84 | 85 | 23 | Հեռագր. ցանցի կոլ. » | 45 | 20 |
| 10 | Արդժողկոմի կոլ. » | 107 | 55 | 24 | Կենտրոն. բորս. կոլ. » | 9 | — |
| 11 | Քաղգլխլուսավորի կոլ. » | 18 | 21 | 25 | Մանված. սինտ. կոլ. » | 6 | 50 |
| 12 | Կոմունալ բանկի կոլ. » | 89 | — | 26 | I-ին Գումակի կոլ. » | 14 | 30 |
| 13 | Ժողկոմխորհի կոլ. » | 64 | 78 | 27 | Պետլուսկինոյի կոլ. » | 5 | 30 |
| 14 | Գեղաշխ. միութ. կոլ. » | 95 | 46 | 28 | Գիշերապահների կոլ. » | 10 | 15 |

*) Այս գումարի մեջ է մտնում նաև Ամերիկահայ մի խումբ բանվորներից ընկ. Գ. Պարոյանի միջոցով ստացված 75 դոլարը։

*) Վերջերս միայն պարզվել է, որ ընկ. Շահվերդյանից ստացված է վոչ թե 150 այլ 300 ռ., այդ սխալը կուղղվի ու մնացած 150 ռ. կմուծվի հետագա հաշիվների մեջ։

**) Այս գումարը նախ ստացված է յեղել փոխարինաբար և հետագայում Կ. Ֆ. նվիրել է Ընկերության, յերբ արդեն կամպանիայի հաշիվները փակված եյին, ուստի մուծվել է նվերների հաշվի մեջ։

Վերոհիշյալ յերեք կարգի հասույթներից են գոյացել Ընկերության դրամական միջոցները, որոնց ամենախոշոր մասը, այն է՝ 16,148 ռ. 35 կ. գործադրված է I ապաստարանի պահպանության վրա, 1924 թ. նոյեմբերից մինչև 25 թ. սեպտեմբերի վերջը 3222 ռ. տրված է Յերևանի Գավգործկոմի II հանրակացարանին՝ որպես նպաստ՝ Ընկերությանս այնտեղ ունեցած վորբերին խնամելու համար. 3719 ռ. 02 կ. գործադրված է ապաստարանի կահավորության և այլ շարժական գույք ձեռք բերելու համար։ Այնուհետև կատարվել են մի շարք վարչական-դիվանական ծախքեր և տրվել են նպաստներ ապաստարանից դուրս գտնված յերեխաներին, վոմանց միանվագ և վոմանց պարբերաբար։

I Ապաստարանի վրա կատարված ծախսերը 75 աղջիկների պահպանության համար նրա հիմնարկության որից մինչև 1925 թ. հոկտեմբերի 1-ը բաժանվում է այսպես՝

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Պարենավորում | 7.039 ռ. | 02կ. | Շենքի նորոգ. և կառ. | 339 ռ. | 54 կ. |
| Հագուստեղեն | 3.362 | 78 | Փոխադրական ծախս. | 370 | 13 |
| Վոտնաման | 965 | 36 | Աշխատավարձ | 2.027 | 15 |
| Դիվանական ծ. | 253 | 89 | Զանազան ծախս. | 1.325 | 17 |
| Վառել.-լուսավ. | 465 | 31 | | | |
| | | | Գում. | 16.148 ռ. | 35 կ. |

Ապաստարանից դուրս գտնված յերեխաներին անհատական նպաստներ 1-ն հոկտեմբերի 1925 թ. տրված է յեղել 206 ռ. 50 կ., Վարչության գրասենյակում կատարված են դիվանական ծախքեր՝ 223 ռ. 87 կ., աշխատավարձ վարչության 3 աշխատակիցներին՝ 170 ռ. և զանազան ծախսեր՝ 137 ռ. 79 կ., ընդամենը այս կարգի ծախսերը՝ 738 ռ. 16 կ.։

## ՅԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

**(1925 թ. հոկտ. 1-ից մինչև 1926 թ. մարտի 1-ը)**

Ընկերության հաշիվների մնացորդները ևս 1-ն հոկտեմբերի 1925 թ. ունեցին հետևյալ պատկերը՝



| Ակտիվ | | | Պասսիվ | | |
|---|---|---|---|---|---|
| Հաշիվների անունը | Գումարը | | Հաշիվների անունը | Գումարը | |
| | Ռ. | Կ. | | Ռ. | Կ. |
| Դրամարկղի հաշիվ | 105 | 13 | Զան. անձ. և հիմն. հաշ. | 76 | 06 |
| Հաշվ. անձանց » | 1143 | 41 | Միանվագ նվեր. » | 2386 | 84 |
| Շարժ. գույքի » | 3719 | 02 | Ամսավճարների » | 2165 | 52 |
| | | | Փոխանցիկ գումար » | 339 | 14 |
| Հաշվեկշիռ | 4967 | 56 | Հաշվեկշիռ | 4967 | 56 |

Ընթացիկ բյուջետային տարվա առաջին 5 ամիսների ընթացքում Ընկերությանս ստացած միանվագ և պարբերական նվերներ հետևյալ հիմնարկներից ու անհատներից.

| | | |
|---|---|---|
| Անդրժողկոմխորհից ընկ. Որախելաշվիլու միջ. | 3000 ռ. | կ. |
| Ընկ. Մոսկվայի ճյուղից | 2900 | 10 *) |
| Փարիզի հայ տիկնանց ընկ.-ից ընկ. Կարեն Միքայելյանի միջոցով | 942 | 80 |
| Յերևանի փոխ.-վարկ. ընկ.-ից | 200 | |
| քաղ. Հովհ. Մելիքյանից | 100 | |
| Ընկ. Ցխակայայից | 60 | |
| Ընկ. Որախելաշվիլուց | 60 | |
| Հիդրոշենի աշխատակիցներից | 60 | |
| Ընդամենը | 7322ռ. | 90կ.**) |

Նույն 5-ամսվա ժամանակաշրջանում կոլլեկտիվներին կից կազմակերպված բջիջներից ստացվել են ամսավճարներ ընդամենը 1487 ռ. 30 կ. հետևյալ ցուցակով.

*) Դրանից 1000 ռ. ստացված է Անդրկովկասի Մոսկվայի ներկայացուցիչ ընկ. Ցեր Գաբրիելյանից և 250 ռ. 10 կ. Մոսկվայի ճյուղից հին հագուստեղենով։

**) ա) Բացի այդ ստացված են նվերներ իրերով՝ Անժողկոմից 30 գործածված վերմակներ և 30 հատ ֆուֆայկաներ, բ) Կոմունալ բանկից Ժողկոմխորհի կարգադրությամբ 1000 մետր բյազ. Անգլիական «Հորտ-Մեր» ընկ. 100 վերմակ ու նույնքան սավան և Մոսկվայի ճյուղից զանազ. դեղորայք։

| | Բջջի անունը | Գումարը | | | Բջջի անունը | Գումարը | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ռ. | Կ. | | | Ռ | Կ. |
| 1 | Արտակ. Հանձնաժ. բջջից | 212 | 70 | 21 | № 7 դպրոցի բջջից | 5 | 40 |
| 2 | Լրդժողկոմի » | 58 | 10 | 22 | № 19 դպրոցի » | 8 | 30 |
| 3 | Առժողկոմի » | 112 | 21 | 23 | Մանված. սինդիկատի » | 48 | — |
| 4 | Աշխբոբսայից » | 10 | 55 | 24 | Սոցապվարչության » | 4 | 05 |
| 5 | Ավտո-աշխատակիցն. » | 29 | 80 | 25 | Փոստհեռժողկոմատի » | 98 | 20 |
| 6 | Գավֆինբաժնի » | 30 | 40 | 26 | Փոխվարկ. ընկ. » | 6 | 60 |
| 7 | Գեղաշխի » | 78 | 09 | 27 | Ֆինժողկոմատի » | 19 | — |
| 8 | № 1 Գումակի » | 26 | 15 | 28 | № 19 դպր. » | 6 | 75 |
| 9 | Գեղաշխի միության » | 5 | 20 | 29 | Հաշմանդամ. միութ. » | 6 | 15 |
| 10 | Սափրիչների կոլ. » | 2 | 50 | 30 | Լուսաշխի միության » | 3 | 40 |
| 11 | Յերգավգործկոմի » | 25 | — | 31 | Հայկոոպի » | 20 | — |
| 12 | Զակպոգրուզի » | 13 | 85 | 32 | Հայբամբակկոմի » | 69 | 96 |
| 13 | Ժողտնտխորհի » | 49 | 45 | 33 | Հայառի » | 93 | 55 |
| 14 | Ֆաճուղ. վարչության » | 32 | 15 | 34 | Մանկավարժ թանգ. » | 34 | 20 |
| 15 | Հայկենտգործկոմի » | 130 | — | 35 | Մաքսատան » | 7 | 20 |
| 16 | Կոմմունալ բանկի » | 13 | 43 | 36 | Ներքգործժողկոմատի » | — | — |
| 17 | № 6 դպր. կոլեկտ. » | 15 | 08 | 37 | Պետհամալսարանի » | 80 | — |
| 18 | Կենտվիճվարի » | 16 | 10 | 38 | Պետլուսկինոյի » | 22 | 30 |
| 19 | Հիդրոկայանի » | 14 | 70 | 39 | Պետբանկի » | 16 | 55 |
| 20 | Կենտդպրոցի արհես. » | 5 | — | 40 | Դիշերապահների » | 19 | — |

Սույն թվի փետրվար ամսից սկսված է նոր կամպանիա ընկերության գրամական միջոցներն ուժեղացնելու նպատակով, սակայն մինչև մարտի 1-ը կամպանիայի արդյունքները դեռ ևս պարզված չեն յեղել։ Մինչև փետրվարի վերջը ընկերության գրամարկղն է մուծված «Խորհրդային Հայաստանում բացված հանգանակությունից 1705 ռ. 51 կ. և շաբաթյակի առթիվ ընկ. Ռաշմաճյանի միջոցով Յերևանի աշակերտությունից հանգանակված 324 ռ. 51 կ.։

Ընթացիկ տարում Հայկենտգործկոմի հանձնարարությամբ կազմակերպված է Նորքում անապատան յերեխաների II ապաստարանը, վորի պահպանության համար անհրաժեշտ միջոցների հայթհայթումը հանձն է առել Կենտգործկոմը։

Սույն բյուջետային տարվա չորս ամիսներում մինչև 1 մարտի II ապաստարանի պահպանության համար, ուր խնամվելիս



են յեղել մոտ 140 սաներ, ծախսված է ընդամենը 9941 ռ. 03 կ., վորը բաժանվում է այսպես.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Պարենավորում | 3135 | 55 | Շենքի նորոգութ. և կառուցվածք | 17 | 80 |
| Հագուստեղեն | 2669 | 79 | Փոխադրակ. ծախսեր | 176 | — |
| Վառնաման | 932 | 30 | Աշխատավարձ | 1254 | 27 |
| Դիվանական ծախսեր | 50 | 62 | Զանազ. ծախսեր | 923 | 15 |
| Վառելիք ու լուսավ. | 781 | 55 | Ընդամենը | 9941 | 03 |

Սույն բյուջետային տարվա առաջին հինգ ամիսների ընթացքում I ապաստարանի վրա (Ծաղկաձորի) ծախսված է 3202 ռ. 18 կ., վորը բաժանվում է այսպես.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Պարենավորում | 1681 | 18 | Շենքի նորոգութ. և կառուցվածք | 42 | 20 |
| Հագուստեղեն | 160 | 85 | Փոխադրակ. ծախսեր | 244 | 81 |
| Վառնաման | 211 | — | Աշխատավարձ | 342 | 54 |
| Դիվանակ. ծախսեր | 33 | 39 | Զանազ. ծախսեր | 278 | 93 |
| Վառելիք և լուսավ. | 207 | 28 | Ընդամենը | 3202 | 18 |

Նույն հինգամսյա ժամանակաշրջանում շարժական գույքի վրա ծախսված է 1289 ռ. 10 կ. վորպես գումարի խոշորագույն մասը, այն է՝ 1026 ռ. 81 կ. գործադրված է նորաբաց II ապաստարանը կահավորելու համար։

Ընդհանուր վարչական ծախսերի գումարը վերջին 5 ամիսների ընթացքում հասնում է 2064 ռ. 45 կոպեկի, վորը բաժանվում է այսպես.

1. Աշխատավարձ 595 ռ. 30 կ.
2. Դիվանակ. ծ. 66 ռ. 27 կ.
3. [illegible] անհտ. 529 ռ. 60 կ.
4. Ծաղկաձորի հրատարակութ. ծ. 400 ռ.—50 կ.
5. Բաղլուսվարին նպաստ մեծահասակների անդրադ. վերացման համար 100 ռ.
6. Զանազան ծախսեր 376 ռ. 78 կ.

Ընդամենը 2064 ռ. 45 կ.։

*Ընկերության հաշվեկշիռը առ 1-ն մարտի 1926 թ.*
*այսպես և պատկերանում*

| ԱԿՏԻՎ | | | | ՊԱՍՍԻՎ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Հաշիվների անունը | Մնացորդ առ 1-ն մարտի | | № | Հաշիվների անունը | Մնացորդ առ 1-ն մարտի | |
| № | | ռ. | կ. | № | | ռ. | կ. |
| 1 | Դրամարկղի հաշիվ | 129 | 28 | 1 | Զանազ. անձ. և հիմնարկ. հաշիվ | 7801 | 90 |
| 2 | Հաշվետու անձանց հաշիվ | 2694 | 27 | 2 | Միանվագ նվերների հաշիվ | 9509 | 74 |
| 3 | Ծախս. յեկ. հաշիվ | 2064 | 15 | 3 | Ամսավճարների հաշիվ | 3652 | 82 |
| 4 | Շարժակ. գույքի հաշիվ | 5008 | 15 | 4 | Հանգես, հանգանակութ. | 1705 | 51 |
| 5 | I ապաստար. պահպանութ. | 3202 | 18 | 5 | Փոխանցիկ գումարների հաշիվ | 127 | 36 |
| 6 | II ապաստար. պահպանութ. | 9941 | 03 | 6 | 1926 թ. շաբաթյակի հաշիվ | 242 | 03 |
| | Հաշվեկշիռ | 23039 | 36 | | Հաշվեկշիռ | 23029 | 36 |

*Ընկերությանս հաշիվները յենթարկվել են վերստուգիչ հանձնաժողովի քննության, որի առթիվ կա համապատասխան արձանագրություն։*

**Հայ. Անապատաց Ցեբեխանների Բարեկամների Ընկերության Վարչություն**

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

ՀՍՍՌ ԿԱՆ ԳՐ. ԴԱՐԱՆ ՀՍՍ Եր. Ազգ. գրադ. ZUUՌ-Арм ССР Ա. ԻՄ Ա. ՄԱՍՍԻՈՆԻ ԱՆՎԱՆ



ՀՀ Ազգային գրադարան NL0212716

43.301